Հ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Հայրենիք—սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980 թթ.), *Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1985, 476 էջ։*

ՍՄԿԿ XXVII համագումարը մեծ խնդիրներ դրեց պատմագիտության առջև. մասնավորապես պահանջվում է արձագանքել կյանքի պահանջներին, ուժեղացնել պայքարը բուրժուական դաղափարախոսության, հակակոմունիզմի դեմ։ Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարը գաղափարախոսական աշխատանքի կարևոր հարցերից մեկը համարեց իմպերիալիզմի ռազմատենչ ուժերին ծառայագրված դաշնակցության հակասովետական քաղաքականության մերկացումը, մի կուսակցություն, որը փորձում է սեպ խրել սփյուռքի և նրա մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի միջև, իր ազդեցության տակ առնել սփյուռքահայերին։ Այս տեսանկյունից կարևոր հետաքրքրություն է ներկայացնում Հովիկ Մելիքսեթյանի «Հայրենիք—սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980)» մենագրությունը։ Գիրքը այդ թեմայով դրված մյուս աշխատություններից տարբերվում է իր բազմապլան կառուցվածքով, փաստական մեծաքանակ նյութի ու տվյալների վերլուծությամբ և ժամանակագրական սահմանների ընդարձակությամբ, հետևաբար, կարելի է ասել, շահեկան է շատ տեսակետներից։ Գրքի առավելություններից է նաև այն, որ շարադրված է բացառապես սկզբնաղբյուրների՝ արխիվային և պարբերական մամուլի հարուստ նյութերի հիման վրա, որոնց ճնշող մասը առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում։

Սփյուռքի և Սովետական Հայաստանի փոխհարաբերությունները ձևավորվել են սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո և տարեցտարի ամրապնդվել ու զարգացել են։ Նույնը վերաբերում է նաև հայրենադարձությանը, որը, ելնելով նրա ընթացքից, հեղինակը բաժանում է երեք փուլի։ Առաջինն ընդգրկում է 1921—1936 թթ., երբ սովետական հայրենիք վերադարձան ավելի քան 42 հազար տարադիրներ։ Երկրորդ փուլում՝ 1946—1949 թթ., պատմական կարճ ժամանակամիջոցում Հայաստանն ընդունեց մոտ 90 հազար մարդ։ Երրորդ փուլը սկիզբ է առնում 1962 թ.։ Այդ փուլում (մինչև 1982 թ.) հայրենադարձվեց շուրջ 22 հազար մարդ։ Ըստ հեղինակի հաշվարկների, Սովետական Հայաստանում ընդամենը հանդիպանել է ավելի քան 200 հազար հայրենադարձ։

Գրքում համառոտ գծերով լուսաբանվել են սփյուռքի առաջացման պատճառները. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական բարբարոսներն իրականացրին XX դարի առաջին խոշոր ցեղասպանությունը, ծրագրված ձևով կոտորեցին 1,5 միլիոն հայ, իսկ ժողովրդի կենդանի մնացած մասը արտաքսվեց Արևմտյան Հայաստանի սահմաններից ու Թուրքիայի մյուս շրջաններից և սփռվարացրեց գաղթօջախներն աշխարհի ամենատարբեր կողմերում, ձևավորելով հայկական սփյուռքը։ Բնաշնչման նույն բախտին կարժանանար Արևելյան Հայաստանի բնակչությունը, եթե նրան փրկության չհասներ 1920 թ. այնտեղ հաստատված սովետական իշխանությունը։ Վերջինս տապալեց հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու, Հայաստանը լրիվ նվաճելու երիտթուրքերից որդեգրած քեմալականների պլանը, և Հայաստանը դարձավ սփյուռքահայության հույսի ու փրկության ապավենը։

1920-ական թվականների սկզբին սփյուռքում հաշվվում էր շուրջ 920 հազար մարդ (Սովետական Հայաստանում ապրում էր 720 հազար մարդ)։ Հայ գաղթականների զգալի մասը ապաստան գտավ Հայկական ՍՍՀ-ում և այլ հանրապետություններում։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը իրականացրին մի շարք միջոցառումներ սփյուռքի հետ կապեր հաստատելու և հայրենադարձություն կազմակերպելու համար։ Ուշագրավ է հանրապետության սովետների I համագումարի կոչը՝ ուղղված սփյուռքահայությանը, ինչպես նաև՝ ՀՍՍՀ կառավարության ու ՀԿԿ կենտկոմի բազմաթիվ որոշումները։ Չնայած հանրապետության սուղ հնարավորություններին, այնուամենայնիվ սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո կազմակերպվեց Միջագետքում դեգերող հազարավոր հայերի վերադարձը մայր հայրենիք։ Դրան հաջորդեցին հայրենադարձների քարավանները Հունաստանից և այլ երկրներից, ուր հայերը գտնվում էին առավել ծանր պայմաններում։

1920—1930-ական թվականներին Հայրենիք—սիյուրք կապերի իրականացման և հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ մեծ դործ կատարեց Հայաստանի օգնության կոմիտեն (204)։ Նա գրեթե բոլոր գաղթօջախներում ուներ իր մասնաճյուղերը, որոնց շուրջը համախմբվել էին սիյուրքի աշխատավոր և հայրենասեր զանգվածները։ Սիյուրքահայության կյանքի առաջադիմական կողմերից էր հայրենակցական կազմակերպությունների ու միությունների երևան գալը և դրանց հայրենասիրական լայն գործունեությունը։ Շուրջ 300 այդպիսի միություններ զգալի դործ կատարեցին իրենց հայրենակիցներին բազմակողմանի օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Հավերժացնելով Արևմտյան Հայաստանի հայրենի բնակավայրերի անունները, նրանք կարևոր լումա ներդրեցին Սովետական Հայաստանում Նոր Արարկիր, Նոր Մալաթիա, Նոր Խարբերդ և նոր ածականը կրող այլ ավանների ու թաղամասերի հիմնադրման գործում։

Դրքում հարուստ փաստերով լուսաբանված է Ազգերի լիգայում հայ գաղթականության հարցի քննարկումը և մեծ հայասեր ու առաջադեմ գործիչ Ֆ. Նանսենի հանձնաժողովի գործունեությունը։ 1925 թ. Ֆ. Նանսենը եղավ Հայաստանում և հանգամանորեն ուսումնասիրեց հայրենադարձության հնարավորությունները։ Սակայն, ինչպես իրավացի նկատում է հեղինակը, Անգլիան, Ֆրանսիան և Ազգերի լիգայի անդամ մյուս պետությունները ըստ էության մտադիր չէին օգնելու հայ ժողովրդին։ Վերջինիս վիճակված դժբախտությունը նրանք օգտագործում էին իրենց իմպերիալիստական նպատակներն իրագործելու, սովետական պետության վրա քաղաքական ճնշում գործադրելու համար։ Դրքում տեղին են օգտագործված հանրապետության հողժողկոմ Ար. Սրզնկյանի խոսքերը։ «Մենք,— նշել է նա,— Նանսենին, որպես մեր և առհասարակ Խորհրդային Միության բարեկամի, անկասկած, հարգանքով ենք վերաբերվում և երբեք չենք կասկածում նրա բարի տրամադրությունների և ցանկությունների մասին, սակայն նրա միսիայից մեծ բան չենք սպասում։ Չէ՞որ նա չէ որոշողն այդ խնդիրը, այլ Ազգերի լիգան» (էջ 141)։

Դրքում ընդարձակ տեղ են գրավում քննարկվող պրոբլեմի ետպատերազմյան ժամանակաշրջանի հարցերը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սիյուրքահայերի շրջանում խիստ բարձրացավ սովետական հայրենիք վերադառնալու ցանկությունը, ծավալվեց նրանց զանգվածային հայրենադարձությունը։ Հ. Մելիքսեթյանը ճիշտ է վերլուծել այն պատճառներն ու հանգամանքները, որոնք պայմանավորեցին հայրենադարձության այդպիսի աննախադեպ վերելքը։ Պատերազմի ընթացքում սիյուրքահայերը հանդես եկան ՍՍՀՄ-ի պաշտպանության դիրքերում, նյութական ու բարոյական օգնություն ցույց տվեցին նրան, դաշնակիցների բանակներում ու պարտիզանական ջոկատներում շատերը մարտնչեցին ֆաշիզմի դեմ։ Սովետական ժողովրդի տարած համաշխարհային-պատմական հաղթանակը խիստ բարձրացրեց սովետական պետության հեղինակությունը, հայրենասիրության նոր զգացում արթնացրեց նրանց մեջ։ Այնուհետև, կարևոր նշանակություն ուներ հայկական հողերը ետ վերադարձնելու, Սովետական Հայաստանին միացնելու պահանջը, որը դրվեց պատերազմի ավարտից հետո։ Վերջապես, շատ երկրներում հայերի համար ստեղծվել էին տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններ։ Այսպիսի իրադրության մեջ ընդառաջ գնալով հայության հայրենադարձության բուռն ցանկություններին և հանրապետության ղեկավար մարմինների միջնորդությանը, միութենական կառավարությունը 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում ընդունեց սիյուրքահայերի զանգվածային ներգաղթ կազմակեպելու մասին։ Ընդ որում, միութենական ղեկավար մարմինները նման որոշումներ ընդունել էին նաև նախկինում, ինչպես նաև դրանից հետո, որը վկայում է հայ ժողովրդի նկատմամբ սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության մեծ հոգատարության մասին։ Հ. Մելիքսեթյանը ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է կազմակերպական ու նախապատրաստական այն ամբողջ աշխատանքները, որոնք ձեռնարկվեցին այդ և մյուս որոշումները իրականացնելու համար։ 1946—1949 թթ. տեղի ունեցավ ամենամեծ զանգվածային հայրենադարձությունը, այնուհետև նրա տեմպը նվազեց և նոր վերելք սկսվեց 1962 թ.։ Հեղինակը հանգել է այն ճիշտ եզրակացության, որ զանգվածային ներգաղթը «հիրավի անուրանալի մեծ հոգատարություն էր օտարության մեջ ընչազուրկ վիճակում տառապող սիյուրքահայ աշխատավորների նկատմամբ և դրական խոշոր դեր ունեցավ նաև դեռևս գաղթաշխարհում մնացողների ազգապահպանման պայքարի հետագա հաջողության համար» (էջ 244)։

Հ. Մելիքսեթյանը քննարկել է նաև այն հարցը, թե ինչպիսի վերաբերմունք են ցուցաբերել հայրենադարձության նկատմամբ սիյուրքահայ կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները։ Դա նա կատարել է մամուլից քաղված հարուստ նյութերի և այլ տվյալների օգնությամբ։ Հայրենադարձության սկզբնավորումից սկսած նրա դեմ հանդես եկան բուրժուական շրջանները՝ նրանց շահերն արտահայտող բարեգործական կազմակերպությունները և առանձնա-

պես դաշնակցություն կուսակցությունը։ Նրանք ամեն ինչ անում էին ժողովրդական լայն զանգվածների աչքում սովետական իշխանությունը վարկաբեկելու, Սովետական Հայաստան վերադառնալու մտքից ետ պահելու համար, քարոզում էին նոր հայրենիք որոնելու գաղափարը (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Աֆրիկա և այլուր)։ «Հայրենադարձությանը իրականում դեմ էին դաշնակցությունն ու գաղութահայ բուրժուական շրջանները,— եզրակացնում է Հ. Մելիքսեթյանը։— Նրանք լավ էին հասկանում, որ ամեն մի գաղթականի ու որբի երկիր տեղափոխությունը լուրջ սպառնալիք է ստեղծում իրենց հետագա գոյության համար, որովհետև ներգաղթի հետևանքով նրանք զրկվում էին այն միջավայրից, ուր դեռևս հնարավորություն ունեին գործելու ապրելու» (էջ 319)։

Հայրենադարձության շուրջը պայքարն ավելի բորբոքվեց ետպատերազմյան տարիներին։ Հայրենադարձության օգտին հանդես եկան առաջադիմական բոլոր ուժերը՝ կոմունիստները, հընչակյանները, ռամկավար ազատականները, հայրենակցական կազմակերպությունները, երիտասարդական միությունները, ազգային ճակատները և այլն։ Դարձյալ բարիկադի մյուս կողմում մնացին նույն դաշնակցականները։ Հակասովետիզմի և հակակոմունիզմի իմպերիալիստական ուժերին միացած դաշնակցությունը հայրենադարձությունն օգտագործում է իր դասակարգային շահերի տեսանկյունից։ «Ազատ ու անկախ» (այսինքն՝ բուրժուական) Հայաստանի ստեղծում, հողերի հարցի լուծում՝ այս դեպքում կողմ են հայրենադարձությանը, հակառակ պարագայում մատնացույց են անում դեպի Կանադա, Ավստրալիա, Լատինական Ամերիկա, Մադագասկար և այլ երկրներ։ Հայրենադարձությանը խանգարելու և այն արգելակելու համար նրանք կանգ չեն առնում նաև ստի, կեղծիքի, անգամ տեռորի և պայքարի այլ միջոցների առջև։ Չնայած այդ ամենին սփյուռքահայ աշխատավորությունը հավատարիմ մնաց իր ուխտին, իր մայր հայրենիքը համարելով Սովետական Հայաստանը, իսկ անխուսափելի ուծացումից փրկվելու միակ միջոցը՝ հայրենադարձությունը, ինչպես նաև Հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդումն ու զարգացումը։

Հ. Մելիքսեթյանի քննարկած վերջին հարցը վերաբերում է նշված կապերին։ Ետպատերազմյան ժամանակաշրջանում այդ կապերն իրականացվում էին տարբեր օղակների միջոցով, ինչպիսիք են ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմատը (մինիստրությունը), Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ), Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությունը և, վերջապես, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն։ Հատկապես բազմազան ու բազմաբեղուն է 1964 թ. ստեղծված հիշյալ կոմիտեի գործունեությունը, որին և հեղինակը իրավացիորեն անդրադարձել է ավելի հանգամանորեն։ Մեծաքանակ և բազմաբովանդակ նյութի ու տվյալների հիման վրա Հ. Մելիքսեթյանը ներկայացրել է այն օգտաշատ գործունեությունը, որ իրագործել ու իրագործում է սովետական իշխանությունը սփյուռքահայության հետ կապերն ամրապնդելու, նրան սովետական հայրենիքի շուրջն ավելի սերտորեն համախմբելու և բազմակողմանի օգնություն ցույց տալու բնագավառում։ Բարդ ու բազմազան է այդ գործունեությունը։ Չէ՞ որ հայկական գաղթօջախներ գոյություն ունեն աշխարհի շուրջ հինգ տասնյակ երկրներում, ուր գործում են հայկական հասարակական-քաղաքական կազմակերպություններ, որոնց գրեթե ճնշող մասի հետ հարկավոր էր հաստատել սերտ հարաբերություններ։ Հեղինակը ելնում է այն օբյեկտիվ իրողությունից, որ Սովետական Հայաստանը և նրա հետ անխզելի կապը հայկական սփյուռքի ազգային դիմագիծը պահպանելու ամենակարևոր երաշխիքն են, և որ այդ կապը կենսական ավյուն ու ավիշ է ներարկում օտար միջավայրում ապրող տարագիր հայությանը։ Այդ կապերը, եզրակացնում է հեղինակը, ձուլման ալեկոծ օվկիանոսում մաքառող հայությանը տալիս են գոյատևման կենսատու ուժ և փարոսի նման լուսավորում են նրա փրկության ուղին։

Ի մի բերելով իր ուսումնասիրության արդյունքները, Հ. Մելիքսեթյանը եզրակացնում է. «Տարագիր հայության փրկության իրական ու գլխավոր գործոնը մայր հայրենիքն է, Սովետական Հայաստանը։ Այդ է պատճառը, որ սփյուռքահայ բոլոր առաջադիմական ուժերը մեծ նշանակություն և կարևորություն են տալիս Սովետական Հայաստանի հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ներգաղթի անընդհատ շարունակմանը» (էջ 447)։

Հ. Մելիքսեթյանի գրախոսվող գրքում տեղ են գտել նաև առանձին թերություններ։ Հեղինակը միայն հպանցիկ անդրադարձել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայության հակաֆաշիստական գործուն պայքարի հարցերին։ Մինչդեռ ցանկալի էր հատուկ գլուխ նվիրել այդ հարցին. չէ՞ որ սփյուռքահայերը, ինչպես վերևում նշվեց, լայն մասնակցություն ունեցան ֆաշիզմի շախշախմանը, նյութական ու բարոյական օգնություն կազմակերպեցին

սովետական բանակի համար։ Գրքի 173-րդ էջում հեղինակը նշում է, որ 1945 թ. ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարությունների միջև ու Պոտսդամի կոնֆերանսում Թուրքիայի զավթած հայկական հողերը ետ պահանջելու հարցը «քննարկման առարկա դարձավ»։ Իրականում, հայտնի է, որ այդ հարցը տվյալ դեպքում ոչ թե քննարկվել է, այլ բարձրացվել սովետական ղեկավարների կողմից որպես սովետա-թուրքական հարաբերությունները բարելավելու պայման։ 101-րդ էջում խոսվում է գաղթականության հարցերով Մոսկվայում կայանալիք խորհրդակցության մասին։ Այստեղ խոսքը պետք է վերաբերեր ոչ թե գաղթականությանը, այլ վերաբնակեցմանը (խորհրդակցությունը նվիրված է եղել երկրի հողաշատ շրջաններում վերաբնակեցման միջոցով գյուղական գերբնակչության տեղավորմանը)։

Արված դիտողությունները և ցանկությունները սկզբունքային բնույթ չեն կրում և բնավ չեն նսեմացնում գրախոսվող աշխատության նշանակությունն ու օգտակարությունը։ Այն լրացնում է մեր պատմագրության մեջ տվյալ պրոբլեմի գոյություն ունեցող բացը։ Գիրքը գրված է հրապարակախոսական մեծ շնչով և լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր